ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2026 թվականի թիվ 63-Ա

ք.Երևան

«Ա-ԹԻՎԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով 2026 թվականի մայիսի 14-ին դիմումի հիման վրա հարուցված թիվ 3 վարչական վարույթի նյութերը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) *պարզեց.*

2026 թվականի մայիսի 14-ին Հանձնաժողով է մուտքագրվել «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության» (այսուհետ՝ Դիմումատու կամ Կուսակցություն) դիմումը, որում նշված է «Ա-ԹԻՎԻ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող) կողմից «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթների պահանջների առերևույթ խախտման փաստի վերաբերյալ:

Կուսակցությունը դիմումով հայտնել է, որ մի քանի օր շարունակ չի հաջողվում կապ հաստատել «Ա-ԹԻՎԻ» ՍՊ ընկերության այն պատասխանատու անձանց հետ, որոնք համակարգում են կուսակցությունների անվճար եթերաժամանակի կազմակերպման գործընթացը:

Դիմումում նշված է նաև, որ մասնավորապես շուրջ երեք օր առաջ մեծ դժվարությամբ հաջողվել է կապ հաստատել և փոխանցել անհրաժեշտ ռեկվիզիտները, սակայն դրանից հետո բազմակի փորձերը կապ հաստատելու ինչպես պաշտոնական հեռախոսահամարներով, այնպես էլ համապատասխան աշխատակցի միջոցով, մնացել են անպատասխան: Ստեղծված իրավիճակը խոչընդոտում է կուսակցության բնականոն գործունեությունը և սահմանափակում օրենքով նախատեսված անվճար եթերաժամանակից լիարժեք օգտվելու հնարավորությունը:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կուսակցության դիմումը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, 2026 թվականի մայիսի 14-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 3 վարչական վարույթը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2026 թվականի մայիսի 15-ի թիվ Ե/04/04.1/358-26 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ կարող է ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2026 թվականի մայիսի 15-ի թիվ Ե/04/04.1/359-26 գրությամբ տեղեկացրել է նաև Դիմումատուին:

Հեռարձակողը 15.05.2026թ. Հանձնաժողով է ներկայացրել գրություն, որում նշված է, որ «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության» և «Ա-ԹԻՎԻ» ՍՊ ընկերության միջև 15.05.2026 թվականին կնքվել է գովազդային պայմանագիր, որի համաձայն՝ Կուսակցության պատվերով Հեռարձակողը պարտավորվել է տրամադրել անվճար հիմունքներով 25 /քսանհինգ/ րոպե տևողությամբ գովազդ 2026 թվականի մայիսի 15-ից մինչև 2026 թվականի հունիսի 05-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում:

Հեռարձակողը բացատրությանը կից ներկայացրել է նաև 15.05.2026 թվականին «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության» և «Ա-ԹԻՎԻ» ՍՊ ընկերության միջև կնքված գովազդային պայմանագիրը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին համաձայն՝

1) տեսալսողական մեդիածառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝

1) տեսալսողական հաղորդումները հեռարձակվում են ընտրությունների (հանրաքվեների) մասին օրենսդրությանը համապատասխան.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը վերահսկում է Հեռարձակողների կողմից նախընտրական քարոզչության՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանումը.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 93–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝

Ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու հանրային տեսալսողական հեռարձակողի եթերաժամից ոչ ավելի, քան 90 րոպե, հանրային լսողական հեռարձակողի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 150 րոպե, իսկ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների եթերաժամից՝ ոչ ավելի, քան 25-ական րոպե:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2026 թվականի փետրվարի 11-ի թիվ 19-Ա որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանության» (այսուհետ՝ Մեթոդաբանություն) 4-րդ կետը սահմանում է.

Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի կարգով տրամադրված եթերաժամի մշտադիտարկումն իրականացվում է համաձայն հրապարակված վճարովի եթերաժամանակի արժեքի սահմանման և եթերաժամանակի տրամադրման կարգի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ և 93-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Հեռարձակողը պարտավոր է պահպանել Օրենքի սահմանող դրույթները:

Քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2003 թվականից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված անձ (լիցենզիայի գործողության ժամկետը, սերիան և համարը՝ ԵՀ N 347, 24.12.2022թ.- 24.12.2029թ.):

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և, ի թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի դրույթները և ձեռք բերված փաստերն՝ արձանագրում ենք.

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 93–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝

Ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու հանրային տեսալսողական հեռարձակողի եթերաժամից ոչ ավելի, քան 90 րոպե, հանրային լսողական հեռարձակողի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 150 րոպե, իսկ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների եթերաժամից՝ ոչ ավելի, քան 25-ական րոպե:

Վարչական վարույթի շրջանակում պարզվել է, որ վարույթի հարուցումից հետո՝ 2026 թվականի մայիսի 15-ին, «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության և «Ա-ԹԻՎԻ» ՍՊ ընկերության միջև կնքվել է գովազդային պայմանագիր, որի համաձայն՝ Կուսակցության պատվերով Հեռարձակողը պարտավորվել է անվճար հիմունքներով տրամադրել 25 /քսանհինգ/ րոպե տևողությամբ գովազդ 2026 թվականի մայիսի 15-ից մինչև 2026 թվականի հունիսի 05-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում: Արդյունքում ապահովվել է Ընտրական օրենսգրքով նախատեսված՝ ընտրությանը մասնակցող կուսակցության՝ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի եթերաժամից անվճար օգտվելու իրավունքի իրացումն օրենքով սահմանված առավելագույն՝ ոչ ավելի, քան 25 րոպե ծավալի շրջանակում:

Հետևաբար, վարույթի ընթացքում ձևավորված փաստական հանգամանքների արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ «Ա-ԹԻՎԻ» ՍՊ ընկերության կողմից չեն խախտվել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 93-րդ հոդվածի 2-րդ մասով և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պահանջները: Միաժամանակ, բացակայում են բավարար հիմքերը եզրակացնելու, որ Հեռարձակողը խոչընդոտել է Կուսակցության բնականոն գործունեությունը կամ սահմանափակել վերջինիս՝ օրենքով երաշխավորված անվճար եթերաժամանակից օգտվելու իրավունքը:

Այսպիսով, քանի որ բացակայում է վարչական իրավախախտման փաստի կամ կազմի առկայությունը, Հանձնաժողովն արձանագրում է, որ 2026 թվականի մայիսի 14-ին հարուցված թիվ 3 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ վարչական վարույթը ենթակա է կարճման, եթե բացակայում է վարչական իրավախախտման դեպքը կամ կազմը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 93-րդ հոդվածի 2-րդ մասը, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 14-րդ կետերը, Հանձնաժողովի 2026 թվականի փետրվարի 11-ի թիվ 19-Ա որոշմամբ հաստատված Մեթոդաբանության 4-րդ կետը և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով և 282-րդ հոդվածի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ա-ԹԻՎԻ» ՍՊ ընկերության նկատմամբ 2026 թվականի մայիսի 14-ին հարուցված թիվ 3 վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի կողմերին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

27 մայիսի 2026թ.
ք.Երևան